

սպաննած էին Հրահատայ յաջորդը՝ Որոզէս Բ. (4—իբր 8 Յ. Բ.) եւ Ոնոն դահ ելած էր (8—իբր 12 Յ. Բ.) բայց իւր արեւմտեան կրթութեամբը չկրցաւ սիրաշահիլ եւ Պարթեւք դահ հանեցին զԱրտաւան Գ. (իբր 10—40 Յ. Բ.), որ Մարաց դահին վրան էր, եւ թէեւ ի սկզբան չյաջողեցաւ, բայց Երկրորդ անգամ յաջողելով մտաւ Տիգրոն, եւ Ոնոնի կը մնար փախչիլ ի Հայս: Ոնոնի Հայոց դահուն վրան մնալն ալ երկարատեւ չէր կրնար ըլլալ, նոյն իսկ Արտաւանի պատճառաւ՝ որ գրաւած էր Հայ ազատաց մէկ մասն ալ իւր կողմը: Եւ քանի որ Տիգրեր զԳերմանիկոս զրկած էր կարգադրելու այս իրերը, Ոնոն չէր կրնար մնալ եւ ստիպուեցաւ Ասորիք ապաստանիլ, եւ Արտաւանայ խնդրելով՝ հեռացուեցաւ անկէ ալ⁴: — Մարտիկան տան, եւ «արքայից արքայի» մը Հայոց դահ ելլելէն ետքը՝ կարգը եկած էր Պողեմոնեան տան (Ձեռոն, 18ին), ինչպէս եկաւ նոյն իսկ Վրահան տան, — ա՛յս վիճակին էին Հայոց իրերը: Բայց նախ տեսնենք Փոքր-Հայոց վիճակը՝ Հռոմայեցոց իշխանութեան ներքեւ մտնելէն ետքը՝ Պոնտոսի հետ միասին, իբր անոր մասը:

Եփրատէն անդին, Կոմագենէ, իսկ Փոքր Գամիւրք, Փոքր Հայք ամբողջ Պոնտոսի հետ բնականապէս ա՛լ հռոմէական էին, եւ անոնց իրերը կարգադրուեցան ըստ բարեհայեցողութեան Հռոմայեցոց: Չարմանալի է Կոմագենեայ զիրքը, որ յայտնապէս աւելի մէտ էր Հայոց եւ Պարթեւաց: Անտիոքոս Ա. նախ կողմն էր Տիգրանայ, յետոյ հաշտուեցաւ Ղուկուղոսի հետ: Կերեւայ Պոմպէոսի ալ զէմ էր, բայց նաեւ անկէ յաջողեցաւ առնուլ Սեյեւեհիւս ամբողջը՝ Ձիւզմայի զիմացը, Եփրատի վրայ, եւ Պոմպէի բարեկամ մնաց՝ քաղաքական խռովութեանց ատեն: Յետոյ սակայն Պարթեւաց Որոզէս արքայից արքայն կնութեան առած էր իւր դուստրը եւ հետեւաբար Պարթեւաց կողմն, այնպէս որ Անտոնիոս ստիպուած էր պաշարել եւ առնուլ Շամշատը: Գամիւրք մնացին տակաւին իբր թաղաւորութիւն՝ Հռոմայ հրամանաց ներքեւ: Եւ նոյն իսկ Պոնտոս, որ իբր «Պոնտական Եպարքի» Հռոմէական պետութեան կցուեցաւ Պոմպէոսի ատեն (64ին), չմնաց այնպէս: Երկիրները տակաւին տհաս էին՝ հռոմէական քաղաքացիութեան իրաւունք

ստանալու: Ուստի այլեւայլ բաժիններով տրուեցաւ իշխանաց եւ արքայից կառավարելու, ի հարկէ այնպէս պատրաստուէին որ ժամանակին ձուլուէին Պետութեան մէջ: Այսպէս Նէսպոլիս-Պոմպէոսոլիս շրջանը (արդի՝ Վէզիր քէօփրիւ — Թաշքէօփրիւ) տրուեցաւ արեւելեան Պամփիլիայի իշխանաց: Նոյնպէս իշխաններու ներքեւ տրուեցան՝ Գաղատական Պոնտոս (Ամասիա-Աբաստոսոլիս-Կարանա) եւ Պոնտոս Պոլիմոնակիան (Պոնտական Կոմանա, Ձեւա եւ Կոդոպիսի): Միհրդատայ Մեծի մահունէ ետքը (63ին)՝ որդին Փառնակ միջոց մը, օղտուելով Պոմպէոսի եւ Կեսարու քաղաքական պատերազմաց խռովալից վիճակէն, նորէն ձեռք ձիւց նախկին Պոնտոսը բաւական մասամբ: Բայց Կեսարու սոջեւ ստիպուեցաւ աճապարանօք փախչիլ: Ծանօթ է պատմութեան այն պատմական եղած խօսքը Կեսարու, զոր այս առթիւ կը ծանուցանէր ի Հոմո՝ Եկի, տեսիլ, յաղթեցի (47ին Ն. Բ.): Բայց Պոնտոսի այս մի մասը՝ Փոքր-Հայոց կից՝ թողուցին Հռոմայեցիք իբր մանր թաղաւորութիւն, եւ Պողեմոնի Ա. տան արքայի անուամբ կոչուեցաւ Պողեմոնական (47ին Ն. Բ.) եւ յաջորդեց այրին՝ Պիւթոզորիս (11 Ն. Բ.—38 Յ. Բ.) եւ ապա Պողեմոն Բ. (38—65 Յ. Բ.) մինչեւ Պետութեան կցուելը: Կեղբոնն էր Կարիւրա, որ մին է այն քաղաքներէն՝ զոր Պոմպէոս հիմնեց կամ մեծցուց, կեղբոն ըլլալու համար հռոմէական քաղաքակրթութեան եւ անոր տարածման շրջակայ գաւառաց մէջ: Արդէն Հռոմէական ոճն այս էր, երբ երկիր մը նահանգ ընել կը պատրաստէին: Արքայից վրայ հսկելէ եւն զատ, կը խաւրէին գաղթականութիւններ, կը հիմնէին քաղաքներ՝ ամփոփելով շրջակայ ժողովրդեան պատշաճ մասը՝ դադարեցնուց հետ, եւ երբ ժողովրդեան խառնուած կը յաջողէր՝ ինքնին յաջողած կ'ըլլար մնացեալը: Փոքր-Ասիոյ մէջ բուն հռոմէացի գաղթականութիւնը մեծ բան չեղաւ: Հոս յոյն գաղթականութիւնը էին որ նոյն դերն ստանձնած էին: Եւ ասի յաջողեցաւ նաեւ Փոքրուն Ասիոյ մէջ, նաեւ ի վերջոյ Փոքր-Հայոց մէջ, բայց ո՛չ բերք բուն Հայոց մէջ: Այս է պատճառը որ նաեւ յընթացս յաջորդ դարուց, երբ Հռոմայեցիք տիրէին ալ Հայոց աշխարհի այլեւայլ մասանց, բայց ի քանի մը փոքրէ բուն նահանգ ընելու՝ որ ձախողեցան, կը թողուին միշտ երկիրն բնիկ վարչա-

⁴ Ի Պոմպէոսոլիս կիլիկից, ուստի փախչիլ փորձելու ատեն սպանուեցաւ: 19ին Յ. Բ.:

կան ձեւը (նախարարական դրութիւնն ալ) եւ անոր համար ասոնք չգաղղեցան նաեւ Հայոց թաղաւորութեան վերաբերելէ, որ ինքնին նոյնպէս յաճախ անձկագոյն կախում ունէր Հոմոմէ: Կարիւրա՝ զոր Պոմպէոս կոչեց Դիոսպոլիս, եւ զոր Պիւթոզորիս շքեղացուց եւ ի պատիւ Օդոստոսի անուանեց «Սերաստէ», յետոյ կոչուեցաւ Նէոկեսարիա (արդի Նիքասար)՝ մնաց մայրաքաղաք Պոլիմոնական Պոնտոսի, հետեւաբար նաեւ Կոդոպիսեայ ո՛չ միայն այս շրջանին, այլ նաեւ այս ամէն կողմանց հիւպատական Կապադովկիա նահանգին մէջ ձուլուելէն ետքը: Ասոր միջոց մը «Սերաստէ» կոչուելին առիթ տուած է երբեմն շիթիւթիւթ բուն՝ մեր խնդրոյ առարկայ՝ Աբաստիոյ հետ՝ Կոդոպիսիէ մէջ: Ասոր հիմնարկութիւնը շատ որոշ չեք զխտեր, այսինքն՝ խնդրական է թէ Պոմպէոսի ըլլայ, այլ կ'երեւայ աւելի Օդոստոսի (տես Կիւմոն, Պոնտական Ուսումիասիւթիւթիւթ, Բ., § 16 եւն): Ըստ այսմ՝ կ'երեւայ թէ դոնէ Միհրդատի օրով բերդ մը կար հոն, եւ այն եւ դարձեալ տեղւոյ յարմարագոյն զիրքը պատճառ եղան հիմնարկութեան քաղաքի մը, որ ըստ երեւութիւն շատ մեծցաւ: Ստրաբոն տակաւին չի զիտեր «Սերաստիա» անունը, այլ Մեգալոպոլիս («մեծ-քաղաք») ուստի «Սերաստիա» յորջորջումը կրնայ միայն անկէ ետքն ըլլալ: Եւ ինչպէս մտադիր կ'ընէ Կիւմոն, նոյն դրից մէջ մնաց Սերաստիա նաեւ դարեր ետքը, թէեւ իւր դրամոց մէջ (հմմտ. Բարբլոն եւ Ռայնախ, «Իրամք Փոքրուն Ասիոյ», Ա.) «մայրաքաղաք» կը կոչուի արդէն Ղուկիոս վերոսի ատեն (161—169 Յ. Բ.), որովհետեւ կը վերաբերէր Պոնտոսի եւ բուն մայրաքաղաքն էր Նէոկեսարիա:

Բուն յատուկ մտօք Փոքր Հայքն ալ անձուկ կապ ունէր Պողեմոնականին հետ, ոչ միայն յետոյ, երբ երկուքը միասին մաս էին Կապադովկեան նահանգին, եւ որովհետեւ յետոյ երբ Հռոմայեցիք կազմեցին իրենց վարչական Փոքր-Հայքը՝ ընդարձակագոյն սահմաններով, Պողեմոնականին մէկ մեծ մասը, մաս մը նաեւ Գաղատական Պոնտոսէ մուծուեցաւ անոր մէջ, այլ նաեւ այս կանխագոյն՝ մանրապետական շրջանին: Եւ որչափ ալ Փոքր-Հայք միութիւն մը կը կազմէր՝ նաեւ Պարթաւեան մասը միասին, արդէն մը չէր որ Հռոմայեցիք ըստ բերման պարագայից մաս մ'այս իշխանին չտային: Այսպէս Փոքրուն Հայոց մաս մ'ընդունած էր Կե-

սարէ Արիորարգան Գ., որդի Արիորարգանայ Բ. Գամրաց (48ին Ն. Բ.), Դիոն. Կաս., իՍ. 63. իՍ. 48, 4): Նոյնը (յամի 20 Ն. Բ.) ընդունեցաւ Արքեղայոս Գամրաց⁵ եւ հրաման ընդունած էր ամէն ուժով օգնական ըլլալու Տիրերիոսի, որ զՏիգրան՝ Արտաւազայ որդին կը տանէր Հայոց դահը նստեցրելու (20ին), Արտաշիսի սպաննուելէն ետքը հռոմէասէր կուսակցութեան կողմանէ (21ին Ն. Բ.): Նիկոսոլիս եւ իւր շրջանը, ուր Անտոնիոս խաբկանօք հրաւիրեց եւ զերի բունց Հայոց կորովի նկարագրի տէր Արտաւազը (34 Ն. Բ.), երբ կը սկսէր իւր ձախող արշաւանքը՝ նուիրած էր Պողեմոնական Պոնտոսի արքայի՝ Պողեմոնի Ա. (36 Ն. Բ.): Այս քաղաքը, զոր Պոմպէոս հիմնած էր իբրեւ կեղբոն յատուկ մտօք Փոքր Հայոց, որչափ ալ կրած ըլլար Փառնակայ պատերազմաւ՝ որ անոր պարսպանց առջեւ խորտակեց Գոմեսիոս Կալուկիոսի բանակը, ծաղկեալ քաղաք մ'եղած էր շուտով: Եւ Ստրաբոն իւր Փոքր-Հայոց նկարագրութիւնը կ'աւարտէ՝ Նիկոսոլիսոյ յիշատակութեանէն ետքը՝ սա զիտողութեամբ թէ Հռոմայեցոց հաճութեամբ Փոքր-Հայոց տիրող «վերջին» արքայն (այսինքն՝ Ստրաբոնի գրելու ատեն, վերջին կէտ 17—18 Յ. Բ.) եղեւ Արքեղայոս: Իսկ իսպառեաց երկրին, կ'ըսէ, կ'իշխէ այժմ Պիւթազորիս, «կին իմաստուն եւ տէրութիւն կառավարելու վարժ»: Ասի, կ'ըսէ ունեցաւ երկու ուստր եւ դուստր մը: Եւ իւր ուստրոց մին քիչ յառաջ Հայոց թաղաւոր տրուեցաւ: Պիւթոզորիս՝ Պողեմոնի այրին, ամուսնացաւ Արքեղայոսի (Փոքրուն Հայոց) հետ եւ անոր մեծնելէն ետքը՝ տէր եղաւ անոր աշխարհաց: Ստրաբոնի տեղեկութեան (— հաւանօրէն իւր գրելէն ետքը մինչեւ ցմահ շարունակած լուսանցադրութեանէ մին, որոնք յետոյ բնագրին մէջ անցած են, —) յիշած ուստրն է Ձեռոն, որդի Պողեմոնի Ա. Պոնտոսի, որ իրօք Հայոց դահը բարձրացաւ, Տիրերի հրամանաւ եւ Գերմանիկոսի ձեռօք (18 Յ. Բ.): Եւ այս խռովալից ժամանակին Ձեռոն այն սակաւաթիւներէն է, որուն թաղադրութիւնն յԱրտաշատ Հայք «ի ձայն ցնծութեան» ընդունեցան եւ կոչեցին զինքը Արտաշէս: Տակիտոս (Բ., 8) որ այն ամէնը կը պատմէ, կ'ակնարկէ նաեւ պատճառը՝ «իշխանս այս, կ'ըսէ, որդի Պողեմոնի ար-

⁵ Դիոն. Կաս. ԾԳ., 9, 2. հմմտ. Ստրաբ. ԺԲ., 3, 29:

քային Պոնտացւոց, նմանեալ անդաւրիւն ի մանկութենէ սովորութեանց եւ հանգամանաց կենաց Հայոց, որոց նոցա, խրախուժեանց եւ ամենայն ճաշակաց բարբարոսացն՝ ամեալ էր զիւրեւ զաւարանին եւ զփոզովորդն միանգամայն»։ Հայք ուրեմն, եւ աւանձնապէս Փոքր-Հայք, զժգոհ չէին Պողեմոնեան տնէն։ Ո՛րչափ տարբեր էր այն ընդունելութիւնը՝ զոր ըրին Հայք ուրիշ Տիւրանի մը, զոր Ներոն՝ Կորբուզոնի ձեռք անպատճառ Հայոց դահ հանել կ'ուզէր՝ ընդդէմ Տրդատայ Պարթևի, եւ զոր Հայք պահ մը ստիպուեցան ընդունիլ (59/60 Յ. Ք.)։ Եւ ինքն Տակիտոս է որ այս Տիւրանի համար կը գրէ. «Տիւրանս այս, ծնեալ յերեւելի տոհմէ Կապադովկացւոց՝ էր թոռն Արքեղայոսի արքայի, այլ արգելեալ բազում ժամանակս ի Հոռոմ իրրեւ պատանդ՝ բերէր յանձին ոգի վատ եւ դեմնաքարչ իրրեւ զգերւոյ»։ Ուստի զարմանալի չէ որ չյաջողեցաւ ի վերջոյ։ Այս թեկնածուն՝ որչափ ալ Գամբաց տնէն ըլլայ, բուն աւելի հրեայ արիւն ունէր, Հերովդեանց կողմնակի ձեռքէն՝ որ Գամբաց անցած էր։

Աւելորդ չէ երկտողով մը տեսնել այս դիպաց նաեւ նախընթացները՝ ցուցնելու համար թէ Հոռոմայեցիք ինչպէս կը շահագործէին այս մանր պետութիւնքն Հայաստանի մասին իրենց ծրագիրներու յաջողութեան համար։ Յիշեալ Զենոն-Արտաշիսի Պահուանէն ետքը՝ Արտաւան Գ. Պարթևաց (իրը 10—43 Յ. Ք.) իւր Արշակ որդին թաղաւորեցուցած էր Հայոց, եւ սպանալիք կար նաեւ Գամբաց կողման (34 Յ. Ք.)։ Տիրեր այս վտանգը ցրելու համար՝ բաց ի բուն Արտաւանայ դէմ հակաբայք Տրդատ մը հանելու փորձէն, որ չյաջողեցաւ, յորդորեց վրաց Փարսման արքայն ի Հայոս արշաւելու եւ անոր Միհրդատ եղբայրը Հայոց թաղին թեկնածու ըլլալու։ Եւ այս Միհրդատ վեր զաւով իսկ կրցաւ սպաննել տալ Արշակը։ Անուեցաւ նաեւ Արտաշատ, եւ Միհրդատ թագ կապեց՝ բնականապէս հոռոմէական ձեռնուղութեամբ։ Արտաւան որչափ ալ Արշակի տեղ՝ թագ կապել տուաւ իւր Որոզ որդւոյն, ի սկզբան անյաջող էր։ Վերք՝ Հայոց աշխարհը սողոցեցին Արանաց եւն ասպատակներով, եւ նաեւ յաղթուեցաւ Որոզ եւ վիրաւորեցաւ։ Զյաջողեցաւ երկրորդ փորձն ալ (36 Յ. Ք.) եւ վերք յաղթող մնացին, իսկ Պարթևք խափա շարունակել չու-

ղեցին պատերազմը, որովհետեւ վիտեղիտս զօրավարը կը սպաննար Միջագետաց, եւ միւս կողմանէ՝ Հոռոմայեցւոց սաղրելով՝ բուն Արտաւանայ դէմ սպաստմբութիւնք ծագեցան (Տրդատ, Գ., 36ին. Կիննամոս՝ 37ին). եւ այս խոտովութեանց առթիւ էր որ Աղիարենեայ Ըղատէս արքայն Հայոցմէ դրաւ Մծբինը՝ որ եւ այնպէս մնաց բաւական տուն։ Միհրդատ վեր ուրեմն արքայ մնաց Հայոց։ Բայց ահա Տիրերի յաջորդը Կաղիդուզա — ըստ Գուտաձիտի բացատրութեան՝ յիմարական քաղաքադիտութեամբ մը — Հոռոմ կը կանչէ Միհրդատը եւ բանտարդել կ'ընէ (37 Յ. Ք.)։ Եւ Պարթևք բունեցին Հայաստանը՝ մինչեւ անգամ իրրեւ նահանգ (37—41 Յ. Ք.) մարդպանութեամբ Դիմոնակայ։ Բայց Արտաւանի մահուանէ ետքն երբ Պարթևք Գոտարդի (40—51 Յ. Ք.) եւ վարդանայ Ա. (42—45 Յ. Ք.) զահակալութեանց խնդիրներով դրադած էին, Կաղիդուզայի յաջորդող Կաղիդուզ (41ին) նորէն կ'արձակէ Միհրդատ վերը, որ հոռոմէական զօրք եւ օգնութեամբ Փարսմանայ նորէն կը մտնէ Հայաստան, եւ Դիմոնակ մարդպանը կը յաղթուի։ Իսկ Հայք չեն զիմադրեր։ Տակիտոս կը յաւելու թէ Միհրդատայ յաջողութիւնը քիչ մը յամեցուց «Կոտիւս արքայ Փոքուն Հայոց, առ որ եկեալ յարեալ էին բազումք ի մեծամեծաց» Հայոց։ Բայց Կաղիդուզայի մէկ հրովարտակը բաւական էր զինքը եւ կեցընելու։ (Այս անուան առթիւ զիտենք որ՝ Միհրդատայ Մեծէ ետքը բուն Կիմմերական Պոնտոսի արքայից մէջ յաճախադէպ է անունս, այսպէս Կոտիւս Ա.՝ 46—78 Յ. Ք. Կոտիւս Բ.՝ 124—132 Յ. Ք. եւն.) Վերը թագաւորեց (42ին Յ. Ք.) եւ խոտովութեամբ սկսաւ վարուիլ։ Փարսմանի որդին Հոռոմայեցիք՝ կաշտուելով Գանոնը հրամատար Պողիոն հարիւրապետը նենդութեամբ սպաննել տուաւ իւր հօրեղբայր Միհրդատը, զորմ մը՝ որ նաեւ Հոռոմայեցւոց անարժան երեւցաւ, բայց պաշտպան ունենալով Գամբաց Պեղիդոնս կուսակալը՝ թագ ալ կապեց (45ին)։ Նշանաւոր են Տակիտոսի այս հոռոմէացւոց նկարագրին մասին գրած զօրովանքները։ Այս իրաց վրայ տարբեր կը խորհէր վաղարշ Ա. (51—61 Յ. Ք.) զոր զլուխ հանեց յաջորդը՝ վաղարշ Բ. (61—77 Յ. Ք.)։ Վաղարշ իւր Բակուր եղբոր տալով Ատրպատական-Մարաստանը, Հայաստանի թեկնածու կը կարգէ միւս եղբայրը՝ Տիրիթ-Տրդատը,

որ պարթևե բանակաւ կը մտնէ Հայաստան (51ին). կ'առնուին Արտաշատ եւ Տիւրանակերտ (52ին). եւ տէր կ'ըլլայ աշխարհին։ Սակայն պարթևե բանակին հեռանալուն՝ Հոռոմայեցիք կրկին կը մտնէ եւ կը բռնանայ, միայն թէ այս անգամ Հայք են որ զինքը կը մերժեն եւ փախչելու ատեն կը վիրաւորէ իւր Զենոբիա կինը՝ զոր մեռած կարծելով կը թողու (53ին)։ Հոռոմ այս լուրն առնելուն՝ Ներոն կը խաւրէ զԿորբուզոն եւ կը տեսնուին պատերազմի պատրաստութիւնք։ Եւ չափազանց հետաքրքիր է թէ ինչպէս Ներոն ըստ հաճոյս կը կարգադրէ նաեւ իրեր՝ որոնց մասին ի վերջոյ խօսք մ'ալ ունէին ըսելիք թէ՛ Հայք եւ թէ՛ Պարթևք։ Հրաման կը տրուի երկու հնազոյն թագաւորաց (Անտիոքոսի եւ Ալբրիպայ) օգնութեան դալու զօրք։ «Փոքր-Հայք» — կ'ըսէ Տակիտոս — հանդերձ զարդուք թագաւորութեանն տուաւ Արիստարուղեայ, եւ աշխարհն Ծովաց՝ Սոյեմայ» (54ին Յ. Ք.)։ Այս Արիստարուղեայ Քաղկիսեցւոյ (Հերովդեանց տնէ), որուն ուրեմն տրուեցաւ Նիկոպոլոս չըջանը, միադիւս դրամը գտած են Կիւմոն եղբայրք («Պոնտ. Ուսումն», Բ., § 26) ի Բուրդ (մերձ յէնտէրէս)։ Իսկ այն Սոյեմոսը Եմեսոսի իշխանն էր, որ յաջորդած էր իւր Աղիդոս եղբոր, բայց երբ Ներոն փորձեց վերահանդնել Մեծ Ծովաց թագաւորութիւնը՝ ի վնաս Հայաստանի, յանձն առաւ նոյնը (Յովսէպոս, Հնախ., Ի., 158. Տակ., ԺԳ., 1)։ Երբ ի վերջոյ չյաջողեցաւ այս, եւ Տրդատ տէր մնաց ամբողջ Հայաստանի՝ Մեծ Ծովքն ալ միասին (66ին Յ. Ք.) կրկին թագաւոր էր միայն Եմեսոսի, կողմնակից վեսպասիանուս եւ Տիտոսի հետ է Երուսաղէմի անման ատեն։ Պարթևեայ ներքին խոտովութիւնք արգելք եղան ազդուապէս միջամտելու, եւ Կորբուզոնի իւր իսկ պատմածին համեմատ⁶ Տրդատի հետ իւր բանակցութեան եւ տեսակցութեան՝ զուր կասկածով մ'ի դերեւելլէին ետքը (57 Յ. Ք.) Կորբուզոն կ'առնու Հայոց այլեւայլ ամբողջները, յատկապէս անտիկ վողանդը, անիրաւ տեղ հրձիգ կ'ըլլայ Արտաշատը (58ին) միայն որովհետեւ «զուեղ մեծ պիտոյ էր» պահելու համար, կ'առնուի նաեւ Տիւրանակերտի միջնաբերդը։ Այս ամէնուն նպատակն էր թագ կապել տալ՝ ընդդէմ Տրդատայ՝ վերոյիշեալ Տիւրանայ

թոռան Արքեղայոսի (59/60 Յ. Ք.)։ Եւ ասոր հաստատութեան համար, կը յաւելու Տակիտոս, անոր քով թողուեցան լեզէոն մը, դաշնակցաց երեք զնդեր եւ հեծելոց երկու թիւ, եւ — որ աւելի նշանակալից է — «զի զիւրին եւս լիցի նմա պահել զիւր նորածին լեխանութիւնն՝ Փարսմանայ, Պողեմոնի, Արիստարուղեայ եւ Անտիոքոսի տուան ի Հայոց գաւառք մերձաւորագոյնք յերկիր նոցա»։ Հայաստանի զաւառաց այս ըստ հաճոյս կարգաւորութիւնք չէին կրնար երկարատեւ ըլլալ. եւ արդէն իրերը փոխուեցան, երբ վաղարշ Բ. իրապէս սկսաւ պաշտպանել Տրդատայ դատը։ Մանիսոսի (Մանէճ) եւ Ատիարենեայ Մոնորալոս (Մանաւաղ) արքայի աստիճանութեամբ պարթևե բանակը եւ Տրդատ մտան Հայաստան եւ Տիւրան պաշարուեցաւ Տիւրանակերտի մէջ։ Կորբուզոն յաջողեցաւ զինադադար մը կնքել պայմանաւ որ պաշարումը վերցուի, բայց հոռոմէացի զուեղն ալ ելաւ քաղաքէն (61ին)։ Ներոն չի հաւանիր, եւ կը խաւրէ Կեսենիոս Պետոսը, որ կ'արշաւէ ի Հայոս։ Բայց վաղարշ անցնելով Տաւրոսի կրճերը՝ ի Հոռոմէա՝ Արշամաշատի մօտ՝ պաշարեց Պետոսի բանակը եւ Հոռոմայեցւոց պարտութիւնը ամօթալի եղաւ՝ ընդ լծով անցնելով (62ին)։ Ներոն նաեւ այս առթիւ զինադադար կը մերժէ, եւ Կորբուզոն Մեկիտինէի քով Եփրատն անցնելով Ծովք կը մտնէ (63ին)։ Այս առթիւ շինուած է Զիւղայի (Խարբերդի մօտ) ամբողջը, ուր զուեղ մը կար (64ին Յ. Ք. արձանագր. CIL, III, 6741—6742)։ Վերջապէս Հոռոմ վերահասու ըլլալով իրաց իսկական վիճակին, Կորբուզոնի հետ տեսութեան մ'ատեն — ձեւը պահելու համար — յանձն առաւ՝ Տրդատ անձամբ երթալ Հոռոմ եւ չքով պսակուիլ Ներոնէ թագաւոր Հայոց (64 Յ. Ք.) եւ իրօք տեղի ունեցաւ նոյն հանդէսը (66ին Յ. Ք.)։ Հոռոմէն նա արուեստաւորներ բերաւ Արշամաշատը շինելու։

⁶ Ալբրիւր Տակիտոսայ եւ Դիոն. Կասիոսի, լի ստուութեամբք։